



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՀՈՒՆՎԱՐԻ 2019 թվականի N 3-Ա

ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ»  
ԱԶ-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ  
ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի  
1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության  
2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշումով, հիմք ընդունելով «Անդրանիկ  
Հայրապետյան» ԱԶ-ի ներկայացրած 2019 թվականի հունվարի 8-ի N 03 հայտը

Որոշում եմ՝

1. Երանոս համայնքի վարչական տարածքում՝ Վարդաձորի խճուղի, 4-րդ  
փակուղի թիվ 11 հասցեում, թույլատրել «Անդրանիկ Հայրապետյան» ԱԶ-ին  
իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի  
մանրածախ վաճառք:

2. Հանձնարարել «Անդրանիկ Հայրապետյան» ԱԶ-ին պահպանել առևտրի  
համայնքային կանոնները, օրենքով սահմանված տեղական տուրքերը վճարել  
համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերով և ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 8-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ